ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 275-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ինմասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղաքացի Լուսինե Հովիկի Ավագյանի դիմումը,Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետականգրանցման վկայականը՝ 1484170 տրված 30.06.2004 թ., և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Լուսինե Հովիկի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ գ.Դսեղ (ծած.06-035-075-000006) բնակելի տանը,մակերեսի չափը՝ 100,5 քմ և բնակավայրերի կառուցապատման հողամասին,մակերեսի չափը՝ 0,164 հա տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Դսեղ, 23-րդ փողոց,1 բնակելի տուն>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022թ.սեպտեմբերի 29
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 276-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հունվարի 18-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 8-Ն որոշումը և Թումանյան համայնքի ՄՊԸ և ԱՁ -ների հայտերը՝
Որոշում եմ.

1.Թույլատրել Թումանյան համայնքի ներքոգրյալ ԱՁ-ներին իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք.
1/Հախվերդյան Հովակիմ-ք.Թումանյան 2022թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
2/ Գրիգորյան Սուսան -ք. Թումանյան 2022թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
3/ Սարգսյան Հայկուշ -ք. Թումանյան 2022թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
4/ Սարգսյան Գայանե -ք.Թումանյան 2022թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
5/ Հովհաննիսյան Անի -ք.Թումանյան 2022թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
6/ Մաթևոսյան Սուսաննա - 2022թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
7/ Ղազարյան Հրանուշ -գ. Մարց 2022թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
8/ Սարգսյան Մարինե -գ. Մարց 2022թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
9/ Սարգսյան Մանուշակ -գ. Մարց 2022թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

2.Հարկատուին տրամադրել համապատասխան հաշվեհամար, տեղական տուրքի վճարումները իրականացնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 30
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 277-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հունվարի 18-ի և փետրվարի 18-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2022թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 8-Ն ,<<Թումանյան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին>> թիվ 17-Ն որոշումները և <<Նուշ հյուրատուն>> ՍՊԸ-ի տնօրեն Անի Ավետիսի Հովհաննիսյանի հայտը՝

Որոշում եմ.

1.Թույլատրել <<Նուշ հյուրատուն>> ՍՊԸ-ին իրականացնել հանրային սննդի կազմակերպում.
1/ Հովհաննիսյան Անի- ք.Թումանյան 2022թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

2.Հարկատուին տրամադրել համապատասխան հաշվեհամար, տեղական տուրքի վճարումները իրականացնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 30
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 278-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >>ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 1-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Չկալով բնակավայրի բնակիչ Սիլվա Մովսեսյանի /29.09.2022թ. թիվ 666/ դիմումը՝

Որոշում եմ.,

1.Բավարարել Սիլվա Մովսեսյանի դիմումը՝ Թումանյան համայնքի Չկալով բնակավայրի, 9-րդ փողոց, 77 հասցեում գտնվող բնակելի տանը կից սանհանգույցի կառուցման շինարարական աշխատանքների կատարման համար և տալ շինարարության թույլտվություն:

2.Շինարարական աշխատանքները սկսել համայնքապետարանի կողմից տրամադրված շինարարության թույլտվության առկայության դեպքում:

3.Համայնքապետարանի բյուջե վճարել 15000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 03
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 279-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. սեպտմբերի 2-ի N 67-Ա որոշումը՝
Որոշում եմ.

1. 2022 թվականի նոյեմբերի 10-ին հայտարարել Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, գ.Դսեղ, 12-րդ փողոց, թիվ 3/5 հասցեում գտնվող 06-035-0106-0010 կադաստրային ծածկագրի 1.140524 հա մակերեսով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության անշարժ գույքի աճուրդ-վաճառք՝Մեկնարկային գինը սահմանել 2303405 ՀՀ դրամ, աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով,մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով,մասնակցության վճարը՝ 5000 դրամ:

2.Համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի և այլ հիմնական միջոցների աճուրդային կարգով օտարող հանձնաժողովին հանձնարարել նախատեսվող աճուրդի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 03
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 280-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, 10.06.2008թ., ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ,հիմք ընդունելով Դսեղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22 ապրիլի 1991թ. N 6 արձանագրության քաղվածքները, <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> անշարժ գույքի գործակալության կողմից տրված հողամասի հատակագծերը,ժառանգության իրավունքի վկայագրերը՝գործ N976 (սեղանամատյան՝ 3945,3946) և քաղաքացի Վանյա Վազգենի Աթյանի /մուտք՝ 03.10.2022թ. թիվ 685/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Վանյա Վազգենի Աթյանի /ծնված՝ 20.11.1955թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Դսեղում գտնվող 06-035-0136-0108 ծածկագրով 0.28201 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
2. Վերականգնել և ճանաչել Վանյա Վազգենի Աթյանի /ծնված՝ 20.11.1955թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Դսեղում գտնվող 06-035-0136-0105 ծածկագրով 0.31453 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
3. Հողամասն ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

4. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ.հոկտեմբերի 03
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 281-Ա

ՀՐԱՆՏ ՍՊԱՐՏԱԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՎՐԱՆԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42 և 43-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 05.01.2022թ թիվ 14-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ Հողային օրենսգրքի 22-րդ հոդվածով, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Հրանտ Սպարտակի Սահակյանի կողմից լիազորված անձ Աշոտ Գուրգենի Արզումանյանի (լիազորագիր՝ տրված 11.09.2022թ., սեղանամատյան թիվ 3204) դիմումը, ինքնակամ կառույցների հաշվառման 2022VPPPBD ծածկագիրը, թիվ 07072022-06-0033 վկայականը, հողամասի և շինությունների համար կազմված հատակագծերը՝

Որոշում եմ՝

1. Հաստատել Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0125-0129 ծածկագրով 0.681383հա մակերեսով հողամասի ճշտված մակերեսը, որը գրանցվել է 0,681 հա կլորացված մակերեսով և օրինականացնել մարզ Լոռի, համայնք Թումանյան, գյուղ Դսեղ, 5-րդ փողոց, թիվ 59 հասցեում գտնվող 06-035-0125-0129 ծածկագրով 0.681383 հա մակերեսով հողամասում 2020թ ինքնակամ կառուցված 369.24քմ ընդհանուր ներքին մակերեսով վրանային զբոսաշրջության բազայի շինությունները և այն ճանաչելով Հրանտ Սպարտակի Սահակյանի /ծնված՝ 08.12.1957թ./ սեփականության իրավունքը:

2. Վերը նշված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ինքնակամ կառույցներ հանդիսացող 317.83քմ մակերեսով վրանային զբոսաշրջության բազայի, 9,78 քմ և 0,12քմ մակերեսներով հենապատերի և 41,51քմ մակերեսով սանհանգույցի /ընդհանուր մակերեսը՝ 369.24քմ/ օրինականացման համար սահմանված 369.24x1486=548700 դրամ վճարը 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով, որը համապատասխանում է գրանցված հողամասի տվյալներին:
6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 03
ք.Թումանյան